

DOI: 10.61484/29538181-ss.8.23-120

**ԺԱՌԱՆԳՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

Ռաֆիկ Սիրունյան

Երևանի «Հայրուսակ» համալսարան
Ընդունված է տպագրության 03.06.2023

Անվտիպագիր. Անկախ քաղաքացու գույքային դրությունից, յուրաքանչյուրը մտածում է իր գույքի հետագա ճակատագրի մասին: Այդ է պատճառը, որ ժառանգման 2 հիմքերից՝ ըստ օրենքի և ըստ կտակի, օրենսդիրը քաղաքացուն առաջին հերթի հնարավորություն է տալիս իր հայեցողությամբ որոշել իրեն պատկանող գույքի հետագա ճակատագիրը: Իսկ դա հնարավոր է միայն կտակ կազմելու միջոցով: Քննարկված են ժառանգման այդ ձևերը, պարզաբանում մտցնելով որոշ հաճախ նկատվող թուրքմբռնված հարցերում:

Հիմնաբաներ. Ժառանգ, ժառանգատու, ժառանգումն ըստ կտակի և ըստ օրենքի, իրավական նորմ, հասարակական-տնտեսական ֆորմացիա, սեփականության իրավունք:

Մարդկային հասարակության հազարամյա պատմության ընթացքում ժառանգման հարաբերությունները միշտ էլ համարվել են հասարակական հարաբերությունների կարևորագույն բնագավառներից մեկը և սոցիալական արժեքների համակարգում զրափել է կայուն ու մնայուն տեղ: Ամեն մի նախորդ սերունդ իր հետնորդ սերնդին ժառանգել է սոցիալական այդ արժեքները, իր ձեռքբերումներն ու նվաճումները և դրանով իսկ պայմանավորել է հասարակության գոյությունն ու հարատևությունը:

Ժառանգման հարաբերությունների ծագումն ու զարգացումը կապված է հասարակության կազմակերպված տնտեսական գործունեության և հատկապես սեփականության ծագման և զարգացման հետ:

Հասարակական-տնտեսական տարբեր ֆորմացիաներում տարբեր են եղել ժառանգման հարաբերությունների բնույթն ու բովանդակությունը, ժառանգման սկզբունքները և հետևաբար հասարակական ընդգրկման շրջանակները: Բայց ամեն մի հասարակարգում այդ հարաբերությունները հանդիսացել են իրենց ժամանակի արտադրական հարաբերությունների համարժեք արդյունքն ու արտահայտությունը:

Ծագելով դեռևս խոր հնադարում ժառանգման հարաբերությունները, որպես սոցիալական ինստիտուտ, նախապես կարգավորվում էին սովորության իրավունքի նորմերով, իսկ երբ առաջացան մասնավոր սեփականությունը, դասակարգերն ու պետությունը, ժառանգման հարաբերությունները սկսեցին կարգավորվել իրավական նորմերով, պետության օրենքներով: Հետևաբար, որպես իրավական ինստիտուտ, ժառանգումն առաջացել է տոհմատիրական կարգերի քայքայման, առանձին ընտանիքների երևան գալու և մասնավոր սեփականության հիման վրա, այսինքն այն ժամանակ, երբ հասարակության նյութական հիմքի վրա ծագեց և առարկայացավ անհատական սեփականության գաղափարը: Սրանք կարևոր նախադրյալներ էին այն պարզ պատճառով, որ առանց սեփականության և առանց վերջինիս փոխանցման իրավունքի ժառանգման հարաբերությունները պարզապես առաջանալ չէին կարող: Սեփականությունն էլ, բնականաբար միշտ միևնույնը չէր մնում և հասկարակության զարգացմանը զուգընթաց

ինքն էլ տարափոխվում էր, ինքն էլ ձեռք էր բերում նոր որակ և բովանդակություն: Ընդ որում փոփոխվում էին ոչ միայն սեփականության ձևերն ու տեսակները, այլև սեփականության տարբեր ձևերի և օբյեկտների ժառանգման հիմքերը, կարգն ու պայմանները, ինչպես նաև ժառանգորդների կազմը: Այս զարգացումներին համապատասխան փոփոխություններն էին կատարվում նաև հասարակական ընդհանուր մտածողության մեջ, որի արդյունքում հայտնվում էին առանձին կարծիքներ ու տեսակետներ խնդրո առարկայի մասին

Այդ է պատճառը, որ տարբեր ժամանակներում ժառանգման հարցերն ու հարաբերությունները գտնվել են աշխարհի տարբեր ազգերի ու ժողովուրդների, մտածողների, փիլիսոփաների և իրավագետների ուշադրության կենտրոնում, որոնք մեկնաբանելով միևնույն հասարակական երևույթը, հաճախ հայտնել են իրարամերժ կարծիքներ: Ի թիվս այլ ընդհանուր հանգամանքների նրանց բոլորին էլ հետաքրքրել է այն հարցը, թե ինչ է իրենից ներկայացնում ժառանգման իրավունքը, որն է նրա էությունն ու նշանակությունը, բնությունից է այն տրված մարդուն, թե շնորհում է նրանց պետությունը, ազատ է մարդն արդյոք այդ իրավունքի իրականացման մեջ և եթե այո, ապա ում կարելի է ժառանգել և ինչ կարգով պետք է ժառանգել և այլն: Հասկանալի է, որ այդ մտածողներից յուրաքանչյուրը լինելով հիմնադիր կամ հետևորդ որևէ գաղափարի կամ ուսմունքի, ժառանգման իրավունքը բացատրել են՝ ելնելով իրենց ուսմունքի դրույթներից, սեփական մտահայեցողության և անձնական պատկերացումների հիման վրա: Այդ խնդրին իրենց աշխատություններում անդրադարձել են հին ու նոր աշխարհի մտածողներ՝ իդեալիստ ու մատերիալիստ փիլիսոփաներ, նատուրալիստ, պոզիտիվիստ և նորմատիվիստ իրավագետներ, ուտոպիստ սոցիալիստներ և անարխիստներ ու համոզված մարքսիստներ: Օրենքների տեսքով այն իր արտահայտությունն է գտնել հայ իրականության մեջ՝ հանձինս Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» աշխարհիկ օրենքների բաժնի, որտեղ նախատեսվել ու կարգավորվել են ժառանգման հարցեր և հարաբերություններ:

Ժառանգումը հանդիսանում է հնագույն իրավական հայտնի ինստիտուտներից մեկը, որի մասին հիշատակում կարելի է գտնել ամենաառաջին գրավոր աղբյուրներում. Շումերների կավե սալիկներում, եգիպտական հիերոգլիֆներում և այլն [1]:

Աթենքում կտակով ժառանգման մասին առաջին անգամ հիշատակվում է Սոլոնի օրենսդրությունում /6-րդ դար մ.թ.ա./, ժառանգատուի իրավունքները այստեղ փոքր ինչ սահմանափակված են: Հայրը, որ ունի արական սեռի, որդեգրված երեխաներ, ինչպես նաև կանայք չէին կարող ժառանգել [2]:

Ըստ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի», հոր մահից հետո նրա գույքը ժառանգում էին որդիներն ու չամուսնացած դուստրերը: Ամուսնացած աղջիկների նկատմամբ նա սահմանափակում էր դնում: Յուրաքանչյուր ամուսնացած աղջիկ ստանում էր եղբոր հասանելիք բաժնի կեսը:

Մ. Գոշի Դատաստանագրքում ժառանգության բաժանումը տեղի է ունեցել սո-վո-րույթային նորմերի հիման վրա: Օրինակ՝ մահացածի ավագ որդին, իբրև ընտանեկան պաշտամունքի անդրանիկ ներկայացուցիչ, պապական օջախի հարատևության

պատասխանատու ժառանգ, պետք է առավելություն ունենա բաժանվելիք ինչքի մեջ: Իսկ կրտսեր որդին պարտադիր ստանում էր հորական տունը:

Այսպիսով հայ սովորույթային իրավունքի մեջ ժառանգումը հիմնականում իրականացվում էր առանց կտակի: Հայ իրականության մեջ մեռնողը իր կամքն արտահայտում էր բերանացի, վկաների և ծխատեր քահանայի ներկայությամբ:

Հետագայում սովորույթային նորմերը աստիճանաբար ստանում էին օրենքի տեսք: Պատմական իրադարձությունների բերումով արևելյան Հայաստանը միացավ Ցարական Ռուսաստանին, և պատմական Հայաստանի այդ հատվածում գործում էր Ցարական Ռուսաստանի Քաղաքացիական օրենքները:

Միանգամայն այլ ձևով է ժառանգման իրավունքը զարգացել խորհրդային շրջանում: Խորհրդային իշխանության առաջին դեկրետը ժառանգման իրավունքի բնագավառում եղել է 27 ապրիլի 1918թ. դեկրետը «Ժառանգման վերացման մասին»: Ժառանգման իրավունքը վերականգնվել է միայն 1922թ. /հոդ.418 ԲՕ 1922թ./ կապված առաջին խորհրդային քաղաքացիական օրենսգրքի ընդունման հետ, որն արմատապես տարբերվում էր ժառանգման վերաբերյալ նախահեղափոխական օրենսդրությունից: Սահմանած էր ժառանգների երկու հերթ: Կտակի բացակայության դեպքում ըստ օրենքի ժառանգման էին կոչվում միայն ամենամոտիկ հարազատները: Առաջին հերթի ժառանգներ էին երեխաները, ամուսին և մահացածի ծնողները: Երկրորդ հերթում՝ մահացածի եղբայներն ու քույրերը, նրա պապն ու տատը: Այդ նորմերը սահմանել էին ի նկատի ունենալով կոմունիզմի մոտակա հաղթանակը ու մասնավոր սեփականության, համապատասխանաբար ժառանգման բուրժուական ինստիտուտի մահը:

Ժառանգման իրավունքի նկատմամբ հասարակական և պետական վերաբերմունքի սկիզբը պետք է համարել ստրկատիրության ժամանակաշրջանը: Այս դարաշրջանի մտածողների կարծիքով և Հին Հռոմի իրավունքով ժառանգը համարվում էր մահացածի կամքի շարունակողը, իսկ ժառանգումը՝ սուբյեկտիվ կամքի անմահությունը: Երևույթը մեկնաբանվում էր բանական մտածողության տեսակետից և իրական՝ անհրաժեշտության տեսակետից: Հուստինյանոսի օրենսգիրքը ճանաչում էր ժառանգատուի կյանքի բացարձակ ազատությունը, արական և իգական ժառանգորդների հարաբերական հավասարությունը և սահմանում էր ժառանգման երկու համակարգ՝ ըստ կտակի և ըստ օրենքի, արգելելով միայն միաժամանակ ժառանգումն ըստ կտակի և ըստ օրենքի միևնույն անձին: Սակայն ստրկատիրության ժամանակաշրջանի ժառանգման իրավունքը ընդհանուր առմամբ այքի չէր ընկնում իր առաջադիմությամբ և հարաբերությունների իրավահավասար կարգավորմամբ, որի գրավոր վկայությունները ավելի կամ պակաս աստիճանով արտահայտվում են Հին աշխարհի ստրկատիրական պետությունների Եգիպտոսի, Բաբելոնի, Հնդկաստանի և այլ երկրների իրավունքի աղբյուրներում[3]:

Ժառանգման իրավունքի արմատները գալիս են Հին Հռոմից: Հին Հռոմի իրավունքով ժառագ համարվում էր մահացածի կամքի շարունակողը, իսկ ժառանգումը սուբյեկտիվ կամքի անմահությունը: Մեր համար սովորական տեսքով ժառանգման իրավունքի հիմնական ինստիտուտները ծագել են Հին Հռոմում: Արդյունքում դրանք ընդունվեցին նոր ժողովուրդների քաղաքացիական իրավունքով և մինչ այժմ կազմում են օտարերկրյա

պետությունների ժառանգման իրավունքի հիմքը: Հռոմեական սկզբունքը պահպանվել է գրեթե բոլոր քաղաքակիրթ երկրների ժառանգման իրավունքի համակարգերում: Օրինակ, համաձայն ֆրանսիական օրենսդրության ըստ օրենքի ժառանգների հերթ են ընկնում ընդհուպ մինչև վեցերորդ կարգի ազգակցականության բարեկամները, իսկ Գերմանիայում հերթերի քանակը, որ կոչված են ժառանգության, ընդհանրապես անսահմանափակ է: Նախահեղափոխական ռուսական իրավունքում գոյություն ուներ ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգների կանոնը. «Ժառանգման իրավունքը տարածվում է ազգի բոլոր անդամների վրա, սկսած միարյունակցական կապից, մինչև ոչ միայն տղամարդու, այլ նաև կնոջ սերնդի ընդհանրապես ընդհատումը»: Այս կանոնը նշանակում էր, որ ազգականները համաձայն ռուսական օրենսդրության ժառանգման էին կանչվում առանց ազգակցականության աստիճանի սահմանափակման [4]:

Բուրժուական հարաբերությունների բուռն վերելքի և սոցիալական բևեռացման ժամանակաշրջանում պատմական մտածողության մեջ առաջին անգամ ուսումնասիրման առարկա դարձավ ժառանգման սոցիալական էության հարցը: Այդ քննարկումները սկսեցին ուտոպիստ սոցիալիստները և ավարտեցին մարքսիստները: Ուտոպիստները գտնում էին, որ սոցիալիստական և արդար հասարակություն կառուցելու համար անհրաժեշտ է վերացնել ժառանգման իրավունքը, և նրանում էին տեսնում դասակարգերի տնտեսական անհավասարության, շահագործողական հասարակության գոյության ու ամեն մի չարիքի պատճառը: Մարքսիստները ուղղելով ուտոպիստների սխալները, հիմնավորում էին, որ ժառանգման մասին օրենքները և քաղաքացիական իրավունքն ամբողջությամբ ոչ թե դասակարգային անհավասարության պատճառ է, այլ հետևանք, հետևաբար պետք է վերացնել ոչ թե ժառանգման իրավունքը, այլ մասնավոր սեփականությունը՝ արգելելով դրա ժառանգումը, որովհետև այն ձեռք է բերվել ուրիշի աշխատանքը շահագործելու և յուրացնելու միջոցով: Իսկ այն սեփականությունը, որը ձեռք է բերվել սեփական աշխատանքով և անձնական սպառողական կարիքների բավարարման նպատակով, պետք է ժառանգվեր առանց սահմանափակման և ազատորեն՝ ինչպես կտակով, այնպես էլ օրենքով[5]:

Համառոտակի այսպիսի զարգացում է ապրել ժառանգման իրավունքը իր սկզբնավորումից մինչև մեր օրերը, որը որպես քաղաքացիա-իրավական ինստիտուտ, անխզելիորեն կապված է քաղաքացիների սեփականության հետ:

Խորհրդային իշխանության տարիներին Հայաստանում ճանաչվում էր սոցիալիստական սեփականությունը իր դրսևորման ձևերով և քաղաքացիների անձնական սեփականությունը: Միաժամանակ օրենքով պահպանվում էր քաղաքացիների անձնական սեփականության իրավունքը և անձնական սեփականության ժառանգման իրավունքը: Ինչպես մեր պետության նախորդ սահմանադրությունները, այնպես էլ այժմ գործող սահմանադրությունը ամրագրում է սեփականության և ժառանգման իրավունքները (ՀՀՍահմանադրության 60 հոդ.), իսկ քաղաքացիական օրենսդրությունը մանրամասնորեն կարգավորում է ժառանգման հետ կապված բազմաթիվ և բազմաբնույթ հարաբերություններն ու հարցերը:

ԽՄՀՄ կազմալուծումից և Հայաստանի վերածննդից հետո երկրում նորից սկսվեց ժառանգման իրավունքի առարկայի կատարելագործման գործընթացը: Ժառանգման իրավունքը հանդիսանում է հնագույն իրավունքային ինստիտուտներից մեկը:

Ժառանգական իրավունքի հայտնվելը իրավաբանների և հասարակության առջև դրել է բազմաթիվ հարցեր. ինչ անել գույքի հետ մարդու մահից հետո, ում այն պետք է պատկանի և ինչպես կարգավորել ամուսնաընտանեկան հարաբերությունների զարգացման հետ կապված հարցերը:

Չնայած այն բանի, որ ժառանգման ինստիտուտը ունի ընդհանուր արմատներ և կառուցվում է ընդհանուր սկզբունքների վրա, տարբեր պետությունների օրենսդրություններ ունեն զգալի տարբերություններ՝ ժառանգման իրավունքի իրավական կարգավորման հարցում:

Միանգամայն բնական է, որ մահանալու դեպքում քաղաքացիները սեփական գույքի ճակատագրի նկատմամբ չեն կարող և չպետք է անտարբեր լինեն: Մինչև վերջերս օրենսդրությունը, որ կարգավորում էր ժառանգման իրավահարաբերությունները, այսինքն ժառանգատուի մահվան դեպքում ուրիշ անձանց /ժառանգորդներին/ քաղաքացու /ժառանգատուի/ գույքի անցման հիմքերը, կարգը և պայմանները /Քաղաքացիական օրենսգիրքը 1964թ./, հաշվարկված էր դրա ընդունման պահի դրությամբ առկա տնտեսական պայմանների համար, որոնք բնութագրվում էին սոցիալիստական սեփականության, և առաջին հերթին՝ պետականության գերակշռող դերով, քաղաքացիների անձնական սեփականության սահմանափակմամբ՝ ըստ նրա կազմի, ծավալի, ձեռք բերման աղբյուրների: Տնտեսական պայմանների փոփոխումը, քաղաքացիների մասնավոր սեփականության հաստատումը և նրա բազմակողմանի պաշտպանումը պետության կողմից, բերել են նոր օրենսդրության ընդունմանը /ՀՀ ՔՕ 10 օգոստոսի 1998թ./: Բացի այդ, կտակների նկատմամբ, որոնք կազմված են եղել մինչ այդ, կիրառվում էին ՀԽՄՀ 1964թ. ՔՕ-ի սկզբունքները:

Իրավական հիմքերի վերլուծություն անցկացնելով, հարկ է նշել, որ ժառանգման իրավունքի հարցերը կարգավորվում են շատ նորմատիվ իրավական ակտերով: Հայաստանի Հանրապետությունում ժառանգման իրավունքը քաղաքացիների սոցիալտնտեսական իրավունքներից է և ամրագրված է ՀՀ Սահմանադրության «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և պարտականությունները» գլխում, որի 60-րդ հոդվածը սահմանում էր, որ «յուրաքանչյուր ոք ունի սեփականության և ժառանգման իրավունք»: Նշված նորմից նույնպես բացահայտորեն երևում է քաղաքացիների ժառանգման իրավունքի և սեփականության իրավունքի անխզելի կապը, քանի որ ժառանգվել կարող են միայն քաղաքացիների սեփականությունը: 2015թ. Դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած Սահմանադրությունում հանրաքվեով փոփոխությունների արդյունքում ժառանգման իրավունքին վերաբերող Քաղաքացիական օրենսգրքի 11-րդ բաժինը ստացավ այլ ձևակերպում, որն իր մեջ ներառեց 68 հոդված:

Ելնելով անցած երեք տասնամյակներում երկրում քաղաքացիների անձնական սեփականության զարգացման ու ամրապնդման աստիճանից, զարգացել է նաև ժառանգման իրավունքը, որի արդյունքում ժառանգման գույքի առավելագույն հանրագումարի

սահմանափակումից անցում կատարվեց դեպի ժառանգման գույքի անսահմանափակ արժեքների ժառանգումը, և ժառանգների սահմանափակ շրջանակից անցում՝ դեպի ժառանգների ընդարձակ շրջանակ:

Հայաստանի Հանրապետությունում ժառանգման իրավունքը իրավունքի ինքնուրույն ճյուղ չի համարվում: Միաժամանակ այն չի կարելի համարել զուտ քաղաքացիական իրավունքի ճյուղ, քանի որ ժառանգման իրավունքի հետ առնչվող որոշ հարաբերություններ, օրինակ՝ կտակ կազմելը և նոտարի կողմից հաստատելը, ժառանգատուին ժառանգման իրավունքի վկայագիր տալու հարաբերությունները համարվում են վարչական իրավահարաբերություններ և կարգավորվում են վարչական օրենսդրությամբ:

Ժառանգական հարաբերությունները օրենսդրականորեն կարգավորված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ բաժնի 1184-1252 հոդվածներում, որը կարելի է ընդունել որպես ժառանգման իրավահարաբերությունների կարգավորման հիմնական փաստաթուղթ:

Ժառանգման իրավունքի հարցերը ներկայում ձեռք են բերել շատ ավելի մեծ արդիականություն: Դա բացատրվում է նրանով, որ շուկայական հարաբերությունների ամրապնդման արդյունքում ունեցվածքի նկատմամբ քաղաքացիների մասնավոր սեփականության իրավունքների ամրապնդումը, որ կարող են անցնել ժառանգման իրավահաջորդության կարգով, զգալիորեն ընդլայնվել են:

Եթե նախկինում ժառանգությամբ անցնող ամենաարժեքավորը, օրինակ ամառանոցը, մեքենան կամ բանկային հաշիվներն էին, ապա այժմ ժառանգության օբյեկտ կարող են լինել բնակարանները, բնակելի շինությունները, հողակտորները, արժեքները և գույքի այլ ձևեր: Դրա հետ կապված ժառանգման իրավունքի նորմերը ձեռք են բերում առավելագույն կարևորություն: Ժառանգման վերաբերյալ նորմատիվային բազան բավականին ու ընդգրկուն է, բայց պահանջում է մանրամասն քննարկում և ուսումնասիրություն կապված նրա հետ, որ նրանում մտցվել են որոշակի էական փոփոխություններ: 1998թ. օգոստոսի 5-ին ընդունված ՀՀ ԶՕ-ի ժառանգման իրավունքի բաժինը փոխարինեց 1964թ. ընդունված ՀԽՍՀ ԶՕ-ի համապատասխան բաժինը, որի կանոններով երբևէ ապրել է Հայաստանը: Նոր ԶՕ-ով կտակը փաստորեն անվանվում է ժառանգման 1-ին հիմքը, իսկ 2-րդը՝ օրենքը: Դա պետք է խթանի կտակների կազմումը:

Կուտակված ունեցվածքը մտերիմներին փոխանցելու ցանկությունը յուրա-քանցուր մարդու բացարձակ բնական ցանկությունն է: Այստեղից էլ ժառանգման հարցերը դառնում են պրակտիկ: Կտակի կայացման միջոցով մարդը որոշում է այն անձանց շրջանակը, որոնց նա կցանկանար կտակել իր ունեցվածքը: Կտակի կազմումը դառնում է ավելի ազատ: ՀՀ ժառանգման իրավունքի գաղափարախոսությունը նրանում է, որպեսզի առանց արմատական փոփոխությունների ամ-րապնդվի մասնավոր սեփականության ինստիտուտի ազատությունը: Պետությունն այժմ դառնում է ժառանգության հավակնորդ՝ միայն ժառանգատուի կամքով, կամ էլ ժառանգություն անժառանգ ճանաչվելու դեպքում: Բացի այդ կտակի հաստատման ազատությունը արտակարգ կարևոր է շուկայական հարաբերությունների մասնակիցների համար, քանի որ դա խթանում է այդ հարաբերությունները:

Սեփականության հետ կապված հարաբերությունները այժմ առաջ են քաշվում առաջին պլան և մեծացել է սեփականության ունեցվածքի տնօրինման հնարավորության նշանակության ինչպես կյանքի ընթացքում, այնպես էլ մահվան դեպքում, որն էլ իր արտահայտությունն է գտել նախ և առաջ ՀՀ Սահմանադրությունում, որը երաշխավորում է մասնավոր սեփականության իրավունքի պահպանումը պետության կողմից և դրա ժառանգման իրավունքը:

ՀՀ նոր ԲՕ-ն դարձավ բեկումնային նորմատիվ ակտ որպես ժառանգման առաջնային տեսակի՝ կտակի կայացման գործում: Նոր ԲՕ-ն, կտակի մասով բերեց շատ դրական փոփոխություններ:

Առաջին, անհրաժեշտ է նշել ըստ օրենքի ժառանգների շրջանակի ընդլայնումը, նորարարություն, որը թույլ է տալիս սահմանափակել այն բանի հնարավորությունը, որ ունեցվածքը վերջի վերջո կժառանգի պետությունը:

Երկրորդ, հատակեցվել են այն չափաբաժինները, որը ստանում են պարտադիր ժառանգները: Տվյալ պայմանները ևս վկայում են ժառանգատուի իրավունքների ընդլայնման մասին: Այս նորմը պաշտպանում է ժառանգատու սեփականատերին. դա նրա ունեցվածքն է և նա իրավունք ունի ուղղակիորեն տնօրինել այն իր մահվան դեպքում:

Երրորդ, ի տարբերություն նախկինում գործող օրենսդրության, ՀՀ ԲՕ 11-րդ բաժնում սահմանված է ժառանգատուի իրավունքը կտակային կարգադրություն դնել ոչ միայն ըստ կտակի այլ նաև ըստ օրենքի ժառանգի վրա/ ԲՕ հոդ. 1214, կետ 2/:

Չորրորդ, հանված է կտակարարի գործողությունների համար սահմանված պարզևատրաման ստացման վրա դրված արգելքը /ԲՕ հոդ. 1212, կետ 8/:

Հինգերորդ, ավելացված է կտակի 2 նոր ձևեր. պարզ նամակի ձևով կտակ, որ իրականացվում է արտակարգ պայմաններում, և փակ կտակ:

Վեցերորդ, նոր քաղաքացիական օրենսդրությունը պարունակում է վկայի ներկայության անհրաժեշտության պահանջ՝ կապված կտակի իրականացման հետ:

Եվ այսպես, անհրաժեշտ է հաստատել <<մասնավոր>> կտակային ժառանգության կայացումը, երբ սեփականատերը ինքն է ձևակերպում իր ունեցվածքի ճակատագիրը: Եվ ընդհանրապես, ինչպես նշում են ուսումնասիրողների մեծամասնությունը, ժառանգման իրավունքը մոտենում է այն պահանջներին, որոնք դնում է շուկայական տնտեսությունը:

Եվս մեկ անգամ ընդգծենք, որ կտակը օրենքով նախատեսված ձևին համապատասխան քաղաքացու մահվան դեպքում անձնական կամքի արտահայտություն է, իրեն պատկանած ունեցվածքի վերաբերյալ ժառանգների նշանակմամբ: Իրավական բնույթով կտակը միակողմանի գործարք է և չի ենթադրում որևէ պատասխան կամ արտահայտություն /այլ անձի/: Այն անմիջականորեն կապված է ժառանգատուի անձի հետ և չի կարող իրականացվել ներկայացուցչի միջոցով, որ գործում է վստահությամբ կամ օրենքի հիման վրա: Մի քանի անձանց անունից մեկ կտակ անել չի թույլատրվում: Կտակը կարող է պարունակել միայն մեկ անձի կարգադրություններ:

Անհրաժեշտ է անցկացնել խորհրդատվական-բացատրական աշխատանքներ բնակչության մեջ ժառանգման իրավունքի հարցերի շուրջ: Կարևոր է որպեսզի մարդիկ հասկանան, որ չի կարելի լուրջ իրավական հարցերը, որ բերում են կարևոր իրավական

հետևանքներ, լուծել առանց ներառելու իրավական, իրավաբանական միջոցներ: Անհրաժեշտ է որպեսզի յուրաքանչյուր ոք իմանա, թե ինչ կպատահի իր կողմից կուտակած գույքի հետ՝ իր մահից հետո: Ամեն ինչ, ցավոք սրտի երբևէ բախվում է ժառանգման խնդիրների հետ, և յուրաքանչյուր մարդու անհրաժեշտ է իմանալ գոնե տվյալ ինստիտուտի կարևոր առանցքները: Ավելին, պետք է բացատրվի կտակի դերը ժամանակակից քաղաքացիական իրավունքում, ինչպես նաև նրա առավելությունը ունեցվածքի տնօրինման մեջ:

Շատ կարևոր է, որպեսզի հանրությունը տեղյակ լինի, թե որ երկրի օրենքով է կարգավորվում ժառանգությունը, ով կարող է ժառանգ հանդիսանալ, արդյոք ժառանգատուն իր գույքը կտակելու բացարձակ իրավունք ունի, թե ոչ, ինչու է կայանում նվեր տալու և կտակելու տարբերությունը:

Եթե մահացողի վերջին բնակության վայրը գտնվել է Հայաստանում, ապա ժառանգությունը կարգավորվում է Հայաստանի օրենսդրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ կտակարարը իր կտակում ընտրել է այլ երկրի օրենքը, որի քաղաքացին է հանդիսանում:

Անձի կողմից կտակ կազմելու, այն վերացնելու իրավունքը, ինչպես նաև կտակի և այն վերացնելու մասին ակտի ձևը որոշվում են այն պետության իրավունքով, որտեղ կտակարար կտականելու կամ այն վերացնելու մասին ակտը կազմելու պահին ունեցել է բնակության վայր:

Բոլոր դեպքերում, անշարժ գույքի ժառանգությունը որոշվում է այն պետության իրավունքով, որտեղ գտնվում է այդ գույքը:

Մտորև նշվածները կարող են ժառանգել թե կտակի և թե օրենքի հիման վրա՝

- ժառանգության բացման օրը կենդանի ֆիզիկական անձինք (այդ թվում քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, օտարերկրյա քաղաքացիները, երկքաղաքացիները կամ բազմաքաղաքացիները),

- ժառանգատուի կենդանության օրոք սաղմնավորված և ժառանգատուի մահից հետո կենդանի ծնված երեխաները:

- Իրավաբանական անձինք, համայնքները, Հայաստանի Հանրապետությունը, օտարերկրյա պետությունները և միջազգային կազմակերպությունները:

Մոտ ապագայում ժառանգման իրավունքի դերը էականորեն կբարձրանա, քանի որ շատ քաղաքացիների մոտ ի հայտ է եկել թանկարժեք սեփականություն: Դա նախ և առաջ բնակարաններն են, բնակելի շինությունները, հողակտորները, տարաբնույթ արժեթղթերը և այլն: Այս ամենը բերելու է ժառանգության հետ կապված գործարքների թվի զգալի մեծացմանը ինչպես նոտարների մոտ, այնպես էլ դատարաններում:

Վերջին ժամանակներս ավելի շատ ժառանգություններ են կազմվում համաձայն կտակի:

Քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորված է այն հարցը, թե արդյոք ժառանգատուն ունի իր գույքը կտակելու բացարձակ իրավունք:

Կտակի ազատությունը սահմանափակվում է միայն պարտադիր բաժնի իրավունքով: Պետք է նշել, որ անկախ կտակի բովանդակությունից, ժառանգատուի մահվան պահի դրությամբ նրա դեռևս անչափահաս երեխաները (մինչև 18 տարեկան), 60 տարին լրացած

կամ հաշմանդամ կամ անգործունակ ճանաչված ծնողները, ամուսինը և երեխաները պահպանում են այն գույքի կեսը ժառանգելու իրավունքը, որը նրանց կհասներ ըստ օրենքի (առանց կտակի) ժառանգության դեպքում:

Քաղաքացիական օրենսգրքի 1194 հոդվածի ուժով ժառանգության պարտադիր բաժնի իրավունքից օգտվում են հետևյալ անձինք.

1. ժառանգատուի անչափահաս երեխաները;
2. ժառանգատուի որդեգրած անչափահաս և անաշխատունակ երեխաները;
3. մահացածի անաշխատունակ ամուսինը;
4. մահացածի անաշխատունակ ծնողները, այդ թվում որդեգրողները և վերջապես,
5. ովքեր առնվազն 1 տարի՝ մինչև ժառանգատուի մահը գտնվել են նրա խնամքին:

Պետք է նկատի ունենալ, որ ժառանգության պարտադիր բաժնի իրավունքից օգտվող անձանց թվարկումը սպառիչ է: Բոլոր այլ ազգականներն ու ոչ ազգականները կարող են օգտվել ժառանգության պարտադիր բաժնի իրավունքից միայն վերոհիշյալ հոդվածի 5-րդ կետում նշված հիմքերով, այսինքն՝ եթե նրանք առնվազն 1 տարի մինչև ժառանգատուի մահանալը գտնվել են նրա խնամքին:

Կտակը պետք է կազմվի գրավոր, կարդացվի և ստորագրվի կտակարարի կողմից և վավերացվի նոտարական կարգով:

Եթե առողջության կամ գրագիտության հետ կապված պատճառներով կտակարարը չի վիճակի չէ ինքնուրույն կարդալ կամ ստորագրել կտակը, ապա նրա փոխարեն դա կարող է անել մեկ այլ անձ:

Օտարերկրյա պետություններում Հայաստանի քաղաքացիների կտակները վավերացնում են ՀՀ դիվանագիտական և հյուպատոսական ծառայությունների կողմից:

Որոշ կազմակերպությունների ղեկավարներ և որոշ այլ անձինք նույնպես կարող են նոտարի փոխարեն կտակը վավերացնել (հիվանդանոցի գլխավոր բժիշկը, ծերանոցի տնօրենը, գորամասի հրամանատարը, քրեակատարողական հիմնարկի ղեկավարը իրավունք ունեն վավերացնել այդ հաստատություններում գտնվող անձնանց կտակները):

Գործնականում, նվիրատվությունը հանգեցնում է սեփականության իրավունքի փոխանցման այն պահին, երբ կնքվում է նվիրատվության պայմանագիրը: Հայաստանի օրենսդրությունը նախատեսում է նվիրատվությունը վերացնելու խիստ սահմանափակ հիմքեր (երբ նվիրատուն ոտնձգություն է անում նվիրատուի, նրա ընտանիքի անդամների կամ մերձավոր ազգականների կյանքի նկատմամբ, մարմնական վնասվածքներ է պատճառում նվիրատուին, կամ նվիրատուի վերաբերմունքը նվերստացած գույքի նկատմամբ, որը նվիրատուի համար ոչ նյութական արժեք է ներկայացնում, ստեղծում է դրա կորստի վտանգ):

Ի տարբերություն նվիրատվության, կտակի դեպքում կտակարարը իր կյանքի ընթացքում պահպանում է կտակված գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և կարող է ցանկացած պահի վերացնել կամ փոփոխել կտակը կամ պարզապես կազմել նոր կտակ:

Գրականության ցանկ

1. Ղարախանյան Գ. Հ., Ժառանգման իրավունք, ուսումնական ձեռնարկ, Եր., 2000
2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երրորդ մաս, Տ.Կ. Բարսեղյանի և Գ. Հ. Ղարախանյանի խմբ. Եր., ԵՊՀ հրատ., 2009:
3. Ապիյան Ն. Ա., Սաֆարյան Գ. Հ. Հոռմեական իրավունք, Ե., 2002
4. Новицкий. И. Б. Римское право - М., 1993 г
5. Власов Ю.Н., Калинин В.В. Наследственное право, Л. 2005

Сирунян Р. - НАСЛЕДСТВО КАК ВАЖНАЯ ХАРАКТЕРИСТИКА ОБЩЕСТВЕННЫХ ОТНОШЕНИЙ. Независимо от имущественного послужного списка гражданина, каждый думает о дальнейшей судьбе своего имущества. Именно по этому из 2-х оснований наследования по закону и по завещанию законодатель прежде всего предоставляет гражданину возможность решать дальнейшую судьбу принадлежащего ему имущества по своему усмотрению. А это возможно только при составлении завещания. Обсуждаются эти формы наследования, проясняются некоторые часто неправильно понимаемые вопросы.

Ключевые слова. Наследник, отказополучатель, наследование по завещанию и по закону, правовая норма, общественно-экономическая формация, право собственности.

Sirunyan R. - INHERITANCE AS AN IMPORTANT CHARACTERISTIC OF SOCIAL RELATIONS INHERITANCE AS AN IMPORTANT CHARACTERISTIC OF SOCIAL RELATIONS. Regardless of a citizen's property status, everyone thinks about the future fate of his or her property. That is the reason why, out of the 2 grounds of inheritance, according to the law and according to the will, the legislator gives the citizen the first opportunity to decide the future fate of the property owned by him at his own discretion. Moreover, this is possible only by making a will. The foundations of inheritance both originated from ancient times, evolved in parallel and were applied as needed. Those forms of inheritance are discussed, clarifying some often-misunderstood issues.

Keywords: Heir, legatee, inheritance according to the will and according to the law, legal norm, socio-economic formation, property right.